

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԿԱՖԼԱՆՔՈՒ¹

(Ավանդական վեպ Պարսկաստանի կյանքից)

Ա

1880 նոյեմբեր 11-ի առավոտը Միանա գյուղաքաղաքից դուրս գալով ճանապարհներս շարունակում էինք:

Միանա գյուղաքաղաքը, որի բնակիչները բոլորը թուրք են, տարածվում է մի հարթ դաշտավայրի վերա, Թավրիզ քաղաքից հինգ իջևան դեպի հարավ:

Ինձ շատ զարմանալի թվեց, երբ ընկերներիցս մեկը, որը դժբախտաբար հայ էր, Միանայի իջևանում դադար առնելու ժամանակ վերցրեց գետնից մի կտոր հող և ուտելուց հետո արտասանեց.

— Ես էլ բնիկ եմ:

Ընկերներիցս մի ուրիշը մի խելոք և ազնիվ պարսիկ էր, որին կոչում էին Հաքիմբաշի Միրզա-Մահմադ. սա Ատրպատականի բժշկապետն էր, և կարծեմ բարի: Միրզա-Մահմադը երեկոյան պատմեց ինձ այդ նախապաշարման պատճառը:

— Այս գյուղաքաղաքը,— պատմեց նա,— երևելի է մի տեսակ մլակի մեծությամբ, հողի գույն ունեցող մալա անունով միջատով. մալան մի թունավոր միջատ է, որ կծում է ընդհանրապես մութ ժամանակ. նորա կծած տեղը նախ կկարմրի և փոքր-ինչ կուռչի, հետո կսևանա, և թույնը փոքր առ փոքր ներգործելով մարմնո մեջ, կարող է սպանել, եթե զգուշություններ ի գործ չդրվեն:

Մեզ կամենում էին հավատացնել, որ այդ միջատը բնիկներին չի կծում, և ահա դորա համար էր, որ հայ ընկերս հողը ուտելով, կամեցավ միջատին հավատացնել, որ ինքն էլ բնիկ է, մինչդեռ մյուս օրը լսեցինք, որ բնիկներից մեկը մոռանալով գիշերը ճրագը վառ թողնելու (այսպես պետք է անել, որ միջատը չմոտենա), առավոտը զարթնել է մարմնի վրա շատ տեղեր վերք ունենալով և եթե նույն բույսին նա մի գավաթ քաղցու (դոշաբ) չխմեր, իմ բժիշկս ինձ հավատացնում էր, որ նա մի ամիս հազիվ կապրեր: Այսպես, թե՛ քաղցուն և թե՛ Միրզա-Մահմադի «ամոնյակ» անունով դեղը փրկեց ինձ երկարատև հիվանդությունից, և գուցե իսկ մահից, որովհետև նորա պատվերի հակառակ, կերա

¹ Կաֆլանքուն մի բարձր լյառ է, որ Ատրպատականի և Պարսկաստանի սահմանն է կազմում:

յուղեղեն, չորեղեն և թթվեղեն, որոնք սաստիկ վնասակար էին. գիշերն էլ ճրագը ինքն իրան հանգչելով առավոտը զարթնելով տեսա, որ ոտներս և կուրծքս սաստիկ քոր էին գալիս և, որ ավելի վատն է, գլուխս բարձից բարձրացնելու ժամանակ կարծում էի թե մի փթանոց ծանրություն էին դրել նորա վրա, սիրտս էլ սաստիկ խառնվում էր:

— Հասի՛ր, Միրզա-Մահմադ,— նկատելով դեռևս չսևացած վերքերը՝ գոչեցի ես,— մալաները կծել են ինձ:

Բժիշկս՝ տեսնելով կարմիր ուռուցքները, վազեց յուր սենյակը՝ գոչելով.

— Մի վախենար, դեռևս չի սևացել, բայց և ձեռք մի տար:

Մի րոպե չանցավ, նա բերեց մի փոքրիկ շիշ և նորա միջի հեղուկից բամբակով սկսեց քսել վերքերիս վերա, իսկ 2—3 կաթիլ էլ խառնելով ջրի մեջ, տվավ ինձ խմելու.

— Է՛հ, բայց կարելի է սա մի վնասակար հեղուկ է,— ասացի ես, չկամենալով խմել:

— Հիմա՛ր,— ասաց նա,— դու լուսանկար ես, վերցուք հոտոտիր, տե՛ս թե ինչ է:

Ես հոտոտեցի և զգացի միայն «էֆիր» կոչվող ցնդողական հեղուկի ախորժելի հոտը. մինչդեռ ես զբաղված էի դեղը քննելով, նա մտավ յուր սենյակը և երեք փոքրիկ շշեր բերելով՝ տվավ ինձ:

— Ահա սոցանից է բաղադրված,— ասաց նա:

Ես հետզհետե հոտոտեցի և իմացա, որ այդ հեղուկը բաղադրված էր ալկոհոլից (alcohol), էֆիրից (ether sulfurique) և ամոնյակից (ammoniaque), ուստի անվախ խմեցի այն ջուրը, որի մեջ խառնված էին երեք կաթիլները:

Ահա այս խաղը խաղաց այդ միջատը իմ գլխին, և ես չէի կարողանալու շարունակել իմ դեռ տասնհինգօրյա ճանապարհը մինչև Թեհրան, եթե այդ բժիշկը հետո չլիներ իր հեղուկովը, որ մյուս օրը ինձ առողջացրուց, մանավանդ, երբ մի գավաթ էլ քաղցու խմեցի և ինձ ցրտից սկսեցի պահպանել: Իմ բժիշկս երևելի բժիշկ էր, և ո՞վ չէր ճանաչում Միրզա-Մահմադ Պարսկաստանի հայրախնամ բժշկին, անխտիր կերպով և ձրիապես օգնում էր ամենքին. ապերախտ թավրիզեցիք նորան պետք է որ լավ ճանաչեն, որովհետև քանի մանուկների ազատեց այն կոկորդային հիվանդությունից, որին զոհ գնաց և Բաֆֆի միակ դուստրը, և ձրիապես էր անում նա իր օգնությունները, միայն առնելով դեղորայքից վարձը ոչ մի կոպեկ ավելի և ոչ մի կոպեկ պակաս. պատահում էր հաճախ, որ նա չքավորներին ձրիապես էր դեղ տալիս: Նա, ասում էին թե բաբի է, թե ի՞նչ է բաբի— մի ուրիշ անգամ ընդարձակորեն կիտսենք այդ աղանդի մասին, առայժմ այս ասենք, որ նոքա ունին առանձին մարզարե Ակկա քաղաքում «Սուփաազգալ» անունով, այդ աղանդը սկիզբ է առել Ակկայից և Պարսկաստանում հետևողները եղել են նախ Զանգյան քաղաքից՝ 1848 թվին: Ես ինչպես տեսնում էի, իմ բժիշկս՝ Միրզա-Մահմադը, ոչ բաբի էր, և ոչ մահմեդական, այլ անհավատի նման մի բան... բայց խոհեմությամբ չէր դիպչում և ոչ մեկի համոզմունքին, որովհետև, ասում էր նա, «ավելի լավ է մի մարդ սպանել, քան վիրավորել նորա այն համոզմունքին, որ ժառանգել է իր պապերից»:

Ինչպէս ասացի, 1880 նոյեմբեր 11-ի մի ցուրտ առավոտ էր, երբ մենք ճանապարհինիս շարունակեցինք, դուրս գալով Միանա գլուղաքաղաքից:

Սաստիկ ցուրտ էր: Ժամը ըստ Եվրոպականի վեցն էր, երբ մենք, գլխից մինչև ոտք փաթաթված, քշելով ձիերնիս, հետևում էինք մեր առաջնորդող ձիավորին: Զգացի, որ դեպի վեր ենք բարձրանում և երեսս բացի: Թանձր մառախուղը ծածկեց իմ աչքից այն սարսափելի ձորը և սարը, որը հետո տեսանք. այդ միջոցին, երբ ես զբաղված էի փնտրելով Միրզա-Մահմադին, մեկը հետևիցս գոչեց.

— Քշի՛ր, ի՞նչ ես կանգնել, մի՞թե չես տեսնում ինչ վտանգավոր տեղից ենք անցնում:

— Միրզա-Մահմադ, դո՞ւ ես,— ասացի ես,— ի՞նչ երկյուղալի տեղ է սա:

— Այժմ կտեսնես, քշի՛ր:

Եվ իրավ, քիչ միջոցից հետո մենք սկսեցինք դեպի ցած իջնել, և երբ մառախուղը փարատվեց, աչքիս ներկայացան ահագին սեպաձև սարեր, որոնց միջով, ինչպէս քարայրի միջով, անցնում էինք: Կարավանի մեջ խորին լռություն էր տիրել, երբ մեր առաջնորդողը կանգնեցրեց ձին և իր մոտի ձիավորի ականջին մի բան փսփսաց:

— Բախտավոր ենք, որ առավոտյան շուտով ենք անցնում այստեղից,— ասել էր նա:

— Բայց ի՛նչ կա, ինչո՞ւ համար բարձր չէր խոսում,— ասացի ես բժշկին:

— Լուռ, երբ Կաֆլանքուից կանցնենք, կասեմ քեզ:

Լռեցի: Վերջապէս երկու ժամից հետո մենք գտնվում էինք մի սարի ստորոտում, որտեղ ես, հետևելով մյուսներին, ձիուց ցած իջա և սանձը ձեռքիս բռնելով, սկսեցի ոտքով բարձրանալ սարը: Ցուրտ էր. այնուամենայնիվ, մենք քայլելով տաքացանք և մի ժամից հետո սարի գագաթը հասնելով, ես հայացք ձգեցի անցած ճանապարհներին վերա. ճանապարհը ոլոր-մոլոր, սարի գագաթից դեպի ցած՝ սարի ստորոտն էր տանում այնքան ուղղությամբ, որ ես հազիվ տեսա ստորոտը, երկու կողմն ահագին խրամներ և նոցա կողքերը ժայռեր, որոնք զարհուրեցնում էին մարդու:

Սարի գագաթում էինք, երբ առաջնորդը կանգնեց:

— Փա՛րք աստծո,— գոչեց նա բարձր ձայնով,— ազատվեցանք:

— Ի՛նչ բանից, Մաշադի-Ռահման,— հարցրի ես:

— Մորթվելուց,— ասաց նա, քա՛հ-քա՛հ ձգելով:

Ես սարսափեցի: Այդ միջոցին Միրզա-Մահմադն ասաց ինձ.

— Դոքա քեզ անհասկանալի են, բայց երբ հինգ հարյուր քայլ առաջ գնալուց հետո հանգստանալ կսկսենք, ամեն բան կբացատրեմ քեզ:

Վերջապես հինգ հարյուր քայլն էլ առնելով բժիշկը թնիս խփեց և ցույց տվեց ինձ ձախ կողմի բլուրի վրա շինված մի տուն և նորանից քիչ ցածր՝ մի փոքրիկ բերդ: Մենք իջանք հանգստանալու, իսկ ես Միրզա-Մահմադին մոտեցա և խնդրեցի բացատրել ինձ նոցա երկյուղը Կաֆլանքուից անցնելու ժամանակ և այդ տների ինչ լինելը:

— Նստի՛ր,— ասաց ինձ,— և լավ լսիր. մի ժամ, գուցե դեռևս երկու ժամ, այստեղ ենք մնալու, մինչև ձիերը խոտ ուտեն:

Նա սկսեց:

Բ

«Ամառային մի օր էր: Վերջալույսի արեգական վերջին ճառագայթները ևս սկսում էին արդեն մայր մտնել: Կզլոդան գետը, շոշափելով բարձր քարաժայռի ստորոտը, ոլոր-մոլոր հորձանքներով հառաջ էր խաղում: Նորա չորս կողմի սարերի մեջ բացի թռչունների ձայնից ոչինչ ձայն չէր լսվում: Կաֆլանքու սարից 500 քայլ հեռավորությամբ, ճիշտ այստեղ, որտեղ որ մենք նստել ենք, գտնվում է մի բարձր սար՝ ցցված գագաթով. այդ սարը, ահա՛, տե՛ս, երեք կողմից բնական խրամներով (ձորերով) ապահովված է, որոնք թեև ջրով լիքը չեն, բայց այնպես անմատչելի են, որ քարաժայռը եթե բերդ լիներ, անկարելի էր նորան գրավել, որովհետև այդ սարը արևելյան կողմից ապահովված է Կզլոդան գետով, որի միջից առանց նավակի դժվար է անցնել և, բացի դրանից, ժայռի վերից սարսափելի խութերով փովում էր ուղղակի դեպի գետը. նորա վերայով անկարելի էր ման գալ մինչև անգամ երկու քայլ.

— Բայց ո՞ր է այդ Կզլոդան ասած գետը, ես չեմ տեսնում,— միջահատեցի ես նորան:

— Մի վերստ սորանից ցած դաշտավայրի միջում, մենք կանցնենք այն կամուրջի վրայից, որը պատմությանս մեջ կհիշվի:

— Ինչպես ասացի, ամառային մի օր էր, և այս օրն էր 1848 թվականի օգոստոս ամսվա 19-ը: Անմատչելի բերդաժայռի արևելյան կողմի վերա, որի տակից հոսում է գետը, երեկոյան վերջալույսի ժամանակ տեսնվում էր մի բավականին լավ կառուցված շինություն, միահարկանի պարսպապատ և դրսից ներս անտեսանելի, իսկ նորա մոտ՝ հյուսիս-արևելյան կողքում, պարսպապատ տնից երկու քայլ ցած, տեսնվում էր մի փոքրիկ և ցած աշտարակ, ժայռի կողքին կառուցած, որո գլխին յափուռներու մեջ փաթաթված նստել էին երեք զինավորված կարծես թե պահապաններ, նոցա տեղից մի քայլ հեռավորության վերա տեսնվում էին երեք միմյանց հագեցրած և գետնի վերա կանգնեցրած սվինավոր հրացաններ:

Պահապաններից երկուսը թեք էին ընկել գետնի վերա, իսկ մյուսը, գլուխը յափուռնջու մեջ փաթաթած, լսում էր երկու թեք ընկածների խոսակցությունը:

— Շիրին,— ասում էր մեկը,— ի՞նչ ես երեխայի նման դուրս տալիս. ինչո՞վ կարող ես ապացուցանել, որ մեր տիկինը սիրահարված է. մեր այն տիկինը, որ յուր ձեռքով էր

մորթում տասնավոր գեղեցկադեմ երիտասարդների, այն հերոս աղջիկը, որո սուրին ոչ մի բան չէր դիմանում և որ երբեք ոչ մի բանից չհաղթվեցավ. և դու, Շիրին, որ մի քանի օր առաջ ասում էիր, թե ոչ մի բան չի կարող հաղթել խանումին, և ես, որ փորձով գիտեմ այդ, պիտի հավատա՞մ արդյոք, որ նա այսօր սիրո ճանկերի մեջն է ընկած:

— Կուգես հավատա, կուգես մի՛ հավատա,— ասաց Շիրինը,— ես տեսնում եմ, որ խանումը սիրահարված է, և սա նորանով կարող եմ ապացուցանել, որ երեկ մինչդեռ ուրախ զվարթ մեզ հետ խոսակցում էր և ձանձրանում էր, երբ մենակ էր մնում, այսօր ամբողջ օրը կարծես զգվում էր մեր ընկերությունից և նույնիսկ այս բոլորին կձանձրանա, եթե սկսենք նորա հետ խոսակցել. և ինչո՞ւ համար երեկվա ընկերակցություն սիրող տիկինը այսօր առանձնություն է սիրում, ասացեք, խնդրեմ, ո՞ր բանն է տիկնոջն այսպես փոխողը, եթե ոչ սերը:

— Դորանով չես կարող ապացուցանել, որ նա սիրահարված է, և, աստված իմ, նա ո՞ւմ վերա կարող է սիրահարվել, դու ինքդ ասում ես, թե նա զգվում է մեր ընկերությունից, եթե սիրե, երեքիցս մեկին պետք է սիրե, որովհետև նա բացի մեզ երեքիցս, ոչ ոքի չի կարող տեսնել այս սարերի մեջ, գուցե նա սկսել է զղջալ յուր այսքան արյունհեղությանց համար և գուցե նորա համար է զգվում մեր ընկերությունից, որ մենք ևս նորա արյունահեղ ընկերներն ենք:

— Այո՛, վաղը կտեսնվի:

— Ո՛չ,— ասաց նստողը,— այժմ կտեսնվի, որովհետև նայեցե՛ք, ահա՛, Կաֆլանքուի վերա կարավան է տեսնվում:— Եվ այս ասելով՝ կանգնեց տեղից և, զատելով հրացանները, ամեն մեկին իրանը տալով, շարունակեց.— պատրաստվեցե՛ք, երևում է, որ հարուստ կարավան է, դուք ցած իջեք ձորում, արձակեցեք մեր և խանումի ձիերը, իսկ ես կգնամ խանումին իմաց տալու, երբ ուշացա, գնացեք կարավանի դեմը կտրեք, մինչև մեր գալը, կարծեմ որ երկուսդ կարող եք մի այդպես սինքրոր կարավանի առաջը կտրել:

— Դու քո գործդ տես,— ասացին երկուսը՝ իրանց հրացանները վերցնելով և, աշտարակից ցած թռչելով, գնացին դեպի հյուսիսային կողմի խրամը, ուրտեղ էր այդ ավազակների ախոռը, իսկ մյուսը, որին մենք Ալի կոչենք, դիմեց դեպի պարսպապատ տունը՝ խանումին կարավանների գալը իմաց տալու համար:

Ալին մոտեցավ պարսպապատ տան դռան, որ գտնվում էր գետի վերա նայող փոքրիկ լուսամուտի հակառակ կողմը, և դուռը խորհրդավոր կերպով բախեց. դուռը բացվեցավ, և նորա դեմ կանգնել էր 18—20 տարեկան աննման գեղեցկությամբ՝ տղամարդու հագուստի տակ ծածկված մի կին. նա իր գլխին կրում էր մի երկար սաղավարտ, որո գագաթի վերա ցցված երկաթի վերա փովում էին ջալլամի գեղեցիկ փետուրները: Հագուստը նմանվում էր այժմյան մեր խանզադաների հագուստներին. գեղեցիկ խոպոպիկները փովում էին հետևից մինչև ուսերը, մեջքի ականապատ գոտուց կախված էր մի երկար կեռ սուր, այդ սուրի պատյանը փողփողում էր ակների մեջ, իսկ կոթը ոսկեգօծ էր և հիանալի քանդակագործությամբ: Նա ոտներին հագել էր մի տեսակ կոշիկ, որ ավելի նման էր մի ամբողջ կտոր կաշուց կտրված և փափուկ գուլպայի:

Սենյակի հատակը զարդարում էին Խորասանի նուրբ գորգերը, իսկ պատերի շրջապատը փոված էին թավշյա նստարաններ: Դռան հանդեպի պատի վերա տեսնվում էր գետնից բարձր մի ամբիոն, որո երեսը թավշապատ էր և որ այդ լեռների թագուհի Սալթանաթի գահն էր. միով բանիվ, սենյակը կահված էր պարսկական ճաշակով, գահի շրջապատում տեսնվում էին նաև աթոռներ և մի սեղան, որո վրա դիզված էին զանազան մեծության լիքը քսակներ: Պատերի վերա փայլում էին այնպիսի զենքեր, որոնցից մեկը այսօր Պարսկաստանում գնահատվում է շատ թանկ. կհասնենք Թեհրան և այնտեղ Շահի ման գալու միջոցին տես նորա մեջքի սուրը, այդ սուրը այս լեռնային թագուհիվ սուրն է:

Ալին երբ ներս մտավ, կինը, որո անունը Սալթանաթ խանում էր, ուներ թախծալից և մաղձոտ դեմք. նորա աչքերում կարծես մարել էր աշխուժության կրակը, նա պաղ կերպով ընդունեց բարևը և նստելով մի աթոռի վրա, հարցրեց.

— Ի՞նչ կա, Ալի, բարեկամ, ես արդեն Շիրինին ասեցի, որ չեմ կամենում իմ առանձնությունս խառնեն:

— Ինչպե՞ս, խանում,— գոչեց զարմացած Ալին,— դո՞ւք եք ասողը, թե մի ուրիշը, եթե դուք եք, ինչո՞ւ եք այդպես խոսում, մի՞թե դուք չեիք, որ մի ժամ առանձին չեիք կարող մնալ:

— Շատ լավ, Ալի, ես եմ այդ խոսողը, այժմ և այսուհետև կամենում եմ առանձին մնալ, գնացեք և դուք էլ հանգստացեք մինչև վաղը:

Ալին երկու քայլ ետ գնաց զարմացած տիկնոջ խիստ և միանգամայն դժգույն դեմքը տեսնելով: Արեգակը բոլորովին մայր էր մտել, և վերջալույսի շնորհիվ մի աղոտ լույս էր սփռվում սենյակում, գետի վերա նայող փոքրիկ լուսամուտից ներս թափանցելով:

— Դեռևս կանգնել ես,— մոմռաց Սալթանաթ խանումը և, «ո՛հ, աստված իմ, այս ինչ թախիժ է» ասելով, ընկավ իր գահի վերա և դեմքը ձեռքերի մեջ ծածկելով՝ լռեց:

— Խանում, ասացեք, խնդրեմ, ի՞նչ է պատահել այսօր ձեզ, չլինի՞ թե...

— Ի՞նչ,— երեսը հանկարծ բարձրացնելով ասաց տիկինը:

— Ոչինչ, խանում, վերջապես ասացեք, ի՞նչ է պատահել ձեզ հետ:

— Ի՞նչ ես անտեղի հարցերով ձանձրացնում ինձ, ինձ հետ ոչինչ չի պատահել, և ես միննույն Սալթանաթ խանումն եմ:

— Չկարծեմ:

— Եվ ինչո՞ւ համար:

— Եթե նույնն եք. վեր կացեք. Շիրինը և Ալաքպարը գնացին կարավանին դիմավորելու, վեր կացեք զինավորվեցեք այն զենքերով և այն հագուստով, որոնցով ուրիշներին ավելի սարսափելի և ինձ ավելի գեղեցիկ եք թվում, ձիերը մեզ սպասում են, գնանք և այդ հարուստ ավարը ձեռքից չհանենք:

— Ես այս երեկոյան փափագ չունիմ արյուն տեսնելու,— ասաց խանումը.— որովհետև գիտեմ, որ իմ սուրս առանց արյուն խմելու պատյան չի մտնի, իսկ ես տրամադրություն չունիմ նորա ծարավը գրգռելու և նորան պատենից հանելու, որովհետև վերջապես բավական է որքան որ արյան գներով հարստացանք, այժմ հանգստանալ պետք է, ինչքան որ կա, այն էլ բավական է մինչև մեր մահը:

— Ա՛յ, ա՛հ, տեսա՞ք, Ալաքպարը չսխալվեց յուր դատողության մեջ, ուրեմն ուղիղ է, Սալթանաթ, որ զոջացել ես արյուն թափելու և մեզնից նորա համար ես զգվում, որովհետև քո արյունահեղ ընկերակիցներն ենք, եթե այդպես է, թույլ տվեք ինձ ասել, որ արդեն բանը բանից անցել է, գուցե այժմ Շիրինը և Ալաքպարը կովում են սպասելով մեր օգնությանը, վեր կացեք այս այցելությունն էլ կատարենք, հետո կմտածենք, թե ինչպես պիտի վարվիլ:

— Ես, կարծեմ, ասացի, թե արյուն տեսնելու փափագ չունիմ, իզուր է քո ճիգը, առանց ինձ հարցնելու չպետք է այդ գործը սկսեիք, ուստի գնացեք և վերջացրեք ձեզ մոտ, ինչպես որ ձեզնով սկսեցիք, իսկ վաղվանից պիտի սկսել մի գործ, որո մասին մի ժամից հետո կսկսենք մտածել, գնա՛, իզուր է երկար խոսելդ, ես այսպես եմ վճռել:

— Խանում,— գոչեց Ալին, մի փոքր-ինչ բարկացկոտ ձայնով,— դա անկարելի է, պիտի գաք ինձ հետ և պիտի վերջացնենք նախ այս, և ապա գործերի համար մտածենք:

Գ

Այդ ըրպեին լավեցին հրացանաձգության և օգնության ձայներ, Սալթանաթ խանումը տեղիցը դանդաղորեն բարձրանալով, մոտեցավ լուսամուտին և, առանց ուշադրություն դարձնելու հրացանաձգության ձայներին, սկսեց նայել դեպի գետը, որ արագ ընթացքով հոսում էր, շոշափելով ժայռի բուն ստորոտը: Ալին հուսահատված խանումի այդ վարմունքից, և ճանաչելով յուր ընկերների օգնության ձայները, նախ շփոթված դեպի դուռը վազեց, բայց դուռը բանալու ժամանակ կարծես մտքից մի բան անցավ, ուստի շտապ քայլերով մոտեցավ խանումին և մեղմ կերպով բախեց նորա ուսը:

— Ի՞նչ ես ուզում,— դարձավ խանումը դեպի նորան, պաղ և լուրջ դեմքով.— ես քեզ ասացի արդեն, որ արյուն տեսնելու այլևս փափագ չունիմ, այլ կյանք և սեր, և ես փոխվել եմ այժմ. գնա՛, ինչ որ կուզեք արեք և կրեցեք ձեր ինձ խորհուրդ չհարցնելու պատիժը...

— Խանում, ուրեմն վճռել եք միայն կյա՞նք տեսնել...

— Այո՛, գնա, այլևս մի խոսիր, ինձ զգվելի է, պարզ ասեմ, ձեր ընկերությունը, որովհետև ձեր բերանից միայն մահվան հոտ է բուրում և մահվան պատգամ դուրս գալիս, որովհետև ձեր մեջ մարել է մարդկային սիրտը, իմս սկսեց արծարծվել և ես ասում եմ այժմ, այս ըրպեին այն արարածին, որ զուրկ է մարդկային գութից և սրտից, գնա, ընկերներիդ հետ մորթեցեք անմեղներին, բերեք դիզեք միմյանց վերա անօգուտ ոսկիներ, բայց ես անպարտ եմ, ստացել եմ մարդկային սիրտ, ես էլ այժմ մարդ եմ, ես հրաժարվում եմ այլևս արյուն թափելուց:

— Բայց, խանում...

— Լռի՛ր, այլևս մի խոսիր, դուք գրավեցիք իմ սիրտը և ինձ այս ամայի լեռներում բերելով՝ դարձրիք ձեր ավագակապետուհին, ես էլ հիմարաբար մանկությունից սիրելով արկածներով լի կյանքը, հետզհետե ստացա այնպիսի ապառաժ սիրտ, որ մոռում էի իմ ձեռքով տասնավոր անմեղներին, չմտածելով անգամ, որ գուցե գա օր, որ ես հաղթվիմ և ստանամ այսքան արյուն թափելուս պատիժը, չերևակայեցի այդ օրը, բայց անսպասելի կերպով այդ օրը հասավ, և ստացա պատիժս, գիտե՞ս որն է այդ պատիժը, Ալի-խան, գիտե՞ս որն է, Մոստոֆի նիզամ, գիտե՞ս որն է թագուհուդ խաբողը և հափշտակողը, դա սերն է...

— Խանում, խանում, բավական է, մի նորոգիր մեր հին վերքերը, մի բանար գաղտնիքը, որովհետև այս պատերն էլ այժմ գուցե լսեցին, որ Ալի-խան Մոստոֆի նիզամն էմ, այո՛, ես այն մարդն էի, որ թողնելով պատիվս, փառավոր պաշտոնս, գերի եղա քեզ և մինչև այսօր իմ նպատակիս դեռ չեմ հասել. այո՛, գիտես խանում, գեղեցիկ Սալթանաթ խանում, թե ինչն էր ինձ ստիպողը, որ ես թողնեմ իմ փառավոր կյանքը և այսօր, այս բուպեին քեզ հովանավորելու պաշտոնը վարեմ, դա սերն էր, և տարօրինակ երևույթ, սերն էր, որ ինձ արյունհեղության դրդեց, և դարձյալ սերն է, որ քո մեջ մարդկային գուր և անդորրության պահանջ ծագեցրեց, ասա՛ ինձ, գեղեցիկ իշխանուհի, արդյոք հիշելով բոլոր գոհողություններս սկսում ես կատարե՞լ այսքան տարվա ունեցած փափագս, ասա՛, եթե այդպես է, չեմ գնալ և այստեղ քո ոտքիդ տակ նստած կապրեմ, հոգ չէ, որ այնտեղ Ալաբայարը և Շիրինը՝ իմ հավատարիմ արբանյակները, սպանվին...

Ալին, որ նախ խոսելու ժամանակ ստացել էր վեհ և պատկառելի կերպարանք և ապա խրոխտ, չոքած էր Սալթանաթ խանումի ոտի տակ, վերջին խոսքերը մրմնջալով:

— Քե՞զ ես սիրեմ,— խոսեց հեզնական կերպով խանումը,— քե՞զ, որ ինձ փախցրիր, քե՞զ, որին աստում եմ և միայն երկյուղից հնազանդվում էի. այժմ, խա՛ն, դուրս եկ և գնա ողբա քո եպերելի ընթացքիդ վերա, որով ավելի զզվելի ես դարձել ինձ քո պիղծ սրտովդ, վե՛ր կաց, ինչո՞ւ ես պառկել ոտներիս տակ, վե՛ր կաց տեսնենք, այժմ ազդեցություն կարող ես ունենալ ինձ վերա քո սրտովդ և բարկացայտ կերպարանքովդ, մանուկ էիր գտել խաբելու, չէի՞ր մտածում, որ վերջապես այդ մանուկը երիտասարդ դառնալով առանց օգնության չի մնալ, գնա՛ և ինչ կարող ես արա, ես անպաշտպան չեմ:

Ալին գունաթափված, վեր թռչելով բռնեց խանումի թևը և ասաց.

— Ասա՛, ո՞վ է քո պաշտպանը, ո՞ւմ վերա ես հույս դնում:

— Ո՞ւմ վերա, իմ վահանը սերն է և զղջումը, ուրիշ ոչինչ:

— Զղջում,— քա՛հ-քա՛հ, սկսեց խնդալ Ալին.— զղջման ժամանակն անցավ, եթե տասը տարի ևս զղջաս՝ չես փրկվիլ, իսկ ինձ զարմանալի է թվում, թե ինչ սեր է քո այդ սերդ, ո՞ւմն ես սիրում, չլինի՞ թե այնքան ստորացել ես, որ չեմ համարձակվում ասել, իմ արբանյակներից մեկի վրա ես աչքդ ձգել:

— Կորի՛ր քո արբանյակներովդ, որոնք գազանությամբ քեզանից պակաս չեն, իմ սերս սուրբ է և այդ սերը ինձ փրկության հույս է տալիս:

— Բայց ո՞րն է, ո՞վ է սիրուդ առարկան. խուլ և համր պատե՞րը, որոտացող գե՞տը, անդրդվելի քարածա՞յրերը...

— Ալի-խան, լսիր մի խոսք էլ ասեմ և այնուհետև աշխատիր այլևս աչքիս չերևալ. դեմքդ մի խոժոռիք, կորավ քո իմ վերա ունեցած ազդեցությունդ, իմ սուրբ սերը հաղթեց դորան, քո սուրդ բթացավ և քո նայվածքդ փոխանակ սարսեցնելու ինձ, ծաղրալի է և արհամարհելի, գնա՛, անհետացիր աչքիցս: Մի մատի շարժվածքով քեզ կարող եմ հավիտյան կորցնել, լսիր իմ վերջին խոսքս էլ և ապա գնա՛ և աշխատիր քավել բոլոր մեղքերդ, իմ մեղքս քավվեցավ, որովհետև ես ստացա վերջապես մարդկային սիրտ և ընկա սիրո հրապուրիչ թակարդի մեջ: Չեմ հայտնելու քեզ իմ սիրո առարկան, որովհետև քո արյունածարավ սուրդ կարող է խմել և նորա արյունը, ես վճռել եմ այլևս չանհանգստացնել անմեղ ճանապարհորդներին և իմ մեղքերս ավելի լավ քավելու համար՝ շինել տալ գետի վերա մի կամուրջ՝ ճանապարհորդներին դյուրություն տալու համար, այլևս ոտ չեմ կոխելու այն սարի գագաթի վերա, որո անունը դրել էք Կաֆլանքու, որովհետև հիշում եմ դեռևս իմ արյունածարավության այն փափագս, որո արտահայտությունն էր անդադար «Կաֆլաքու»² հարցմունքս. այժմ կաֆլան թող անվտանգ անցնի այդ գագաթից իմ կառուցանելիք կամուրջի վրայից, և փոխանակ անիծելու իմ դիվական անունս, թող օրհնե ինձ, անեծքները, և օրհասականի խոխոռոցը չեն թողնում ինձ հանգստանալու և նայիր լուսամուտից...

— Սալթանաթ,— բարկության շարժումով ասաց Ալի-խանը,— պիտի չլռե՞ս, վերջապես, և չպիտի՞ շարժվիս մեր ընկերներին օգնության գնալու...

— Ո՛չ, ո՛չ, ոչ,— ասաց Սալթանաթ խանումը, հետզհետե բարձրացնելով ձայնը:

— Վճռել ես,— որոտաց Ալի-խանը, ձեռքը սրի դաստապանի վերա դնելով և մի քայլ ևս առաջանալով դեպի խանումը:

— Հեռու, անարգ արյունարբու, հեռո՛ւ, ապա թե ոչ՝ կզգաս վերջապես իմ գորությունը, մի ստիպիլ ինձ խորտակելու այդ սուրդ և նորա վերայի արյունը հետզհետե քամել տալու քո գլխիդ վերա, գնա՛ հեռացի՛ր աչքիցս, մի համարձակվիր ձեռքդ այդ սրիդ վերա դնելու, որը թաթախված է եղբորդ արյունով...

— Լռի՛ր, մի արտասանիր այդ զարհուրելի խոսքերը,— որոտաց Ալի-խանը, կայծակի արագությամբ սուրը պատյանից հանելով,— մի՛ արտասանիր այդ խոսքերը, ողորմելի՛, որովհետև չգիտես, թե այդ կրակն է, որ ինձ ավելի արյունածարավ է անում, որովհետև դեռևս անգիտակ ես, որ նորա արյունը սրբվում է իմ այս սրի վերայից, երբ ուրիշների արյունով լվանում եմ սա և գալիս եմ հանգչելու քո ոտներիդ տակ. ի՞նչ ես կարծում անել հիշեցնելով իմ ոճրագործությունս, որ քո սերդ թելադրել է ինձ անելու, կարծում ես թե կսարսափի՞մ, ո՛չ, այդ խոսքերով դու ավելի անգովանալի արյունարբության ես դրդում

² «Կաֆլաքու» պարսկերեն նշանակում է «Կարավանդ ո՞ւր է»:

ինձ, վեր կաց զինվորվիր, այնտեղ, ցածու՛մը ընկերներս, սիրելի արբանյակներս, արյուն են խմում, իսկ այստեղ՝ ծարավից տոչորվում...

— Գնա՛, ասացի քեզ, որովհետև գիտեմ, թե առանց ինձ, քո սուրդ՝ անգոր և բազուկներդ թույլ են,— ասաց խանումը:

— Խանում,— հանկարծակի ձայնը մեղմացնելով ասաց Ալի-խանը,— գուցե կրկին հիշում ես նորան այս տասը տարուց հետո, ի՞նչ դեպք էր, որ մտաբերել տվեց քեզ այն սոսկալի հիշատակը...

— Կամենում ես իմանա՞լ, ուրեմն սպասի՛ր, բայց չսարսափես,— ասաց խանումը և գահից ցած իջնելով, մոտեցավ պատին, հրեց մի դուռ և առանձնացավ կողքի մի սենյակում, որը նորա առանձնասենյակն էր:

Ալի-խանը անձկանոք սպասում էր:

Ցածու՛մը դադարել էին հրացանաձգությունները, ուստի նա համարյա մոռացել էր կարավանը և իր արբանյակներին:

Դ

Սալթանաթ խանումն ուշացավ, ուստի Ալի-խանը սկսեց անձկանոք շրջագայել սենյակի մեջ, երբեմն հետաքրքիր և անհամբեր ակնարկ ձգելով այն դռան վերա, որտեղից ներս մտնելով աներևութացել էր խանումը:

Անձնատուր եղած իրան պաշարող մտքերին, նա հիշեց հանկարծ յուր արբանյակների կարավանի առաջ գնալը և շտապ քայլերով գնաց դուրս, հետաքրքիր աչքով դիտեց կարավանի նախկին կանգնած տեղը, աչքերը հաճեց դեպի առաջ, բայց ոչինչ չկարողացավ տեսնել, բացի մի քանի շարժուն սև կետերից, որոնք Կզլոդանի մյուս կողմից սակավ առ սակավ հեռանում էին: «Այս ո՞ւր են Աքբարը և Շիրինը» մրմնջեց նա հուզված:

Մի քանի րոպե այս դրության մեջ մնալուց հետո և տեսնելով, որ ոչ մի նշան չի երևում, նա համր քայլերով կրկին մոտեցավ դռանը և ներս մտավ. սենյակում դարձյալ ոչ ոք չկար, և երբ նա սկսեց աչքը հաճել սենյակի մեջ, պատահմամբ աչքին ընկավ մի բրդոտ բան, Սալթանաթ խանումի գահի տակից հետաքրքիր հայեցվածքով մոտեցավ և դուրս քաշելով, տեսավ, որ այդ մի ահագին բրդե գլխարկ է կեղտոտ և կտրտված. զարմանքը պաշարեց նորան, նա սկսեց մտածել, թե այս հովվական բուրդի գլխարկը ի՞նչ գործ ուներ այս սենյակում, արդյոք կարավաններից կողոպտված իրեղենների հե՞տ է ներս եկել սա, թե մի այլ բացատրություն ունի. նա կոացած արդեն սկսել էր զննել գահը, երբ կողքի սենյակի դուռը բացվեցավ և դռան շեմքին երևեցավ Սալթանաթ խանումը:

— Ալի-խան, ի՞նչ ես փնտրում,— ասաց նա գունատ երեսով, նկատելով Ալի-խանի արածը և սեղանի վերա դրված բուրդե գլխարկը. նա մի քայլ առաջ անցավ և կամենում էր վերցնել նորան, բայց հետո մտաբերելով, որ յուր այս շարժվածքի վերա կարող է կասկած տանել,

զսպեց իրեն, բայց Ալին արդեն նկատելով նորա շարժվածքը, ևս առավել սկսեց զարմանալ:

— Դո՞ւ ես, վերջապես, խանո՛ւմ,— ասաց նա,— խնդրեմ, ասա ինձ, արդյոք այս բուրդե հովվական գլխարկը պատահմամբ կոդոպտված իրեղենների հե՞տ է եկել այստեղ, թե՞ մի ուրիշ նշանակություն ունի սա, ո՞ւմն է սա, ո՞վ է սորա տերը:

— Ինչպե՞ս, ի՞նչ մորթե գլխարկ է, դա որտեղի՞ց գտար:

— Այստեղից, քո թախտի տակից,— ասաց Ալի-խանը և լուրջ դեմքով մոտեցավ խանումին,— ասա՛ խնդրեմ, ինչո՞ւ երկար տարիներ անցան, և ես մի տարօրինակ բանի ներկա չգտնվեցի, իսկ այսօր, այս կես ժամում, բազմաթիվ տարօրինակ բաներ են ներկայանում աչքիս:

— Որո՞նք են այդ քո տարօրինակ համարվածները:

— Որո՞նք են, մի՞թե ինքդ չես զգում, թե քո այսօրվա խոսակցությունները ինչ ապշություն բերին գլխիս, դու հարցնում ես իմ արբանյակները, որոնք կյանքիս պահապաններն էին, գնացին և ետ չդարձան, ո՞վ գիտե ինչեր են անցել այնտեղ, ցածումը՝ Կաֆլանքուի վերա, և այս բանի պատճառը դու ես, խանո՛ւմ, դու, որ այսօր կարծես Սալթանաթ խանումը չես, ի՞նչ է այս մորթե գլխարկը և, վերջապես, ի՞նչ կա այդ սենյակումը, որ այսօր ինձ համար գաղտնիք է, ի՞նչ է, ասա ինձ, վերջապես, այն պատճառը, որ քեզ փոխել է և վայրենացրել է:

— Վայրենացրել, Ալի-խան, սխալ ես, ընդհակառակը այսօր մի էակ, մի պատճառ իմ արյունածարավ սիրտս փոխել է զգայուն և մարդասերի սրտի:

— Էակ... խանում, ո՞վ է այդ էակը, ո՞վ է այն համարձակը, որ կարողանա քեզ տեսնել այս անմարդաբնակ տեղում, այս առանձնացրած վայրում, ո՞վ է այն հանդուգնը, որ կոխել է այս դռան շեմքը, առանց յուր կյանքից ձեռք վերցնելու, այդ հանդուգնը ուրեմն այստեղ է, այն սենյակումդ է. հեռու ինձանից, գնամ տեսնեմ նա դե՞ռ է, թե՞ հրեշտակ, որ առանց մեր աչքին դիպչելու կարողացել է մուտք գործել այստեղ, խոսել քեզ հետ,— ասաց Ալի-խանը և առաջացավ դեպի սենյակի դուռը:

— Մի՛, մի՛ մոտենար, Ալի-խան, հառաջ, քան թե դու մտնեիր այդ սենյակը, նորա շեմքում քո մահը կգտնեիր, առանց մի կաթիլ արյունի, կմեռնեիր ինքդ, առանց ոչ ոքից հարված ստանալու, հեռու կաց, կբանամ վարագույրը, և դու կտեսնես այն էակին, բայց մի պայմանով:

— Ո՞րն է այդ պայմանը,— հարցրեց հեգնությամբ Ալի-խանը:

— Հեգնո՞ւմ ես, խան, փույթ չէ, ծիծաղիր ինձ վերա որքան կարող ես, սակայն լավ իմացիր, որ առանց իմ իմանալու եթե մի քայլ ևս առաջանաս դեպի այս սենյակի դուռը, շեմքը կլինի քո գերեզմանը, ետ գնա, մի քայլ ևս և լսիր իմ պայմանս:

— Առաջարկիր,— ասաց Ալին կես հեգնորեն և կես զարմացական կերպով:

— Ինձ վերածնություն շնորհողին կտեսնես, եթե այս րոպեին զինաթափ լինես:

— Որպես զինաթափ, խան՝ւմ, մի՞ թե դու չգիտես, որ ես մանկությունից մինչև այս հասակս առանց զենքի և ոչ մի րոպե չեմ անցկացրել, մի՞ թե դու չգիտես, իմ զենքերը իմ անձի կեսն է և ես առանց զենքերի կես մարդ եմ. ո՛չ, առաջարկիր մի ուրիշ պայման և ես հետաքրքրության, լսում ե՞ս, լոկ միայն հետաքրքրության համար կաշխատեմ պայմանդ ընդունել:

— Ողորմելի մարդ, այո՛, գիտեմ քո այդ բնությունդ, որ մանկությանդ առաջին խաղալիքը քո այդ արյունածարավ սուրդ է եղել, քո արյունարբու հորդ ժառանգությունը, գիտեմ, որ այդ սուրդ ցարդ անբաժան է եղել քեզանից և դու քո այդ սուրիդ վերա կրում ես երկու, սրիդ վերա սարսափ ազդող մարդկանց արյունը, բայց այժմ քեզ թվում է, թե սուրդ քո կյանքիդ կեսն է. մի շտապիր, շուտով կպատովի վարագույրը, և այդ սուրը քո սրտիդ դարայից՝ ավելի ծանրություն կտա. դու կաշխատիս խոսիլ, գոռալ, բայց ձայնդ չի դուրս գալ, այն բառերը, որոնք կկամենաս արտասանել, այդ միջոցին կխեղդեն քեզ, իսկ դարայի փոխված սուրդ, վերջապես, այնքան կճնշե քեզ, որ...

— Բավական է, խանում,— որոտաց Ալի-խանը և վերջապես չկարողանալով զսպել յուր սարսափը և բարկությունը, հարձակվեցավ Սալթանաթի վերա՝ կամենալով իր ձեռքով փակել նորա բերանը, բայց վերջինս կարծելով, թե նա իրան կամենում է սպանել, ձախ ձեռքով շրջանակ գծագրեց օդի մեջ, իսկ աջ ձեռքով մի փոքրիկ դաշույնով զինավորված հառաջացավ դեպի նա...

— Անա՛րգ գազան, կարծում ես թե ես այդ չէի՞ նախատեսել,— բացականչեց նա,— այժմ հեռու կանգնիր և մի ընդմիջիր խոսքս:

— Հա՛, հա՛, հա՛, խանում,— բացականչեց նա,— դու կարծում էիր պիտի սպանե՞մ քեզ, ի՛նչ անտեղի ենթադրություն, մի՞ թե կարող ես մտածել, թե ես, որ արյուն, այո՛, շատ արյուն թափեցի քեզ իմս անելու համար և տասնյակ տարի է, որ իբր պահապան զինվոր փափկությամբ և հոգատարությամբ պահպանում եմ քեզ, այսօր կգրկվիմ քեզանից իմ ձեռքով:

— Հայրասպա՛ն... եղբայրասպա՛ն,— գոչեց վեհ ձայնով Սալթանաթը:

— Խան՝ւմ, Սալթանաթ...— գոռաց Ալի-խանը, սաստիկ զայրացած ձայնով:

— Ես եմ քո խանումը, ես եմ Սալթանաթը, ապա ի՞նչ ես ուզում ինձանից, կարծում ես, ողորմելի մարդ, չե՞մ զգում, թե ինչպես տակնուվրա է լինում սիրտդ և խիղճդ, ինչպես չի թողնում աչքերդ փակելու, դու հրեշ ես, քո մեջ չկա մարդկության և ոչ մի նշույլ, դու, հրեշից վատթարդ, ինչպե՞ս ես համարձակվում կրել հորդ և եղբորդ արյան մեջ

³ Այս բառը իսկապես ծագել է պարսկերեն դերե բառից, որ նշանակում է աներևույթ ոգի, թեև դարա թուրքերեն նշանակում է սև. այս չար ոգին քնելու ժամանակ նստում է մարդուս կրծքի վերա և ճնշելով նորան ծանրացնում է նորա շնչառությունը:

թաթախված այս դաշույնը քո մեջքին, ինչպե՞ս ես համարձակվում այդ դաշույնն ամեն մի րոպե աչքիդ առաջը պահել և պարծենալ նորանով:

— Ի սեր աստուծո, խանում,— գոչեց Ալի-խանը մեղմ և դողդոջուն ձայնով,— հերի՛ք է ինչ որ տանջեցիր ինձ, նայի՛ր և տե՛ս այս կես ժամում իմ մորուքիս մազերը ավելի սպիտակեցան, քան տասը տարում սպիտակածները, նայիր այդ հայելիին, որի մեջ իմ պատկերս կես ժամ առաջ երիտասարդ էր, իսկ այժմ՝ ծեր, որովհետև դու հրացայտ շանթերով տակնուվրա արիր խճմտանքս, բավական է, ինչ տանջեցիր ինձ, ո՛հ, հերիք է, ինչ որ արյուն խմեցի. վաղը այլևս այստեղ չեմ կարող լինել...

— Աստված... ուրեմն վերջապես հիշեցի՞ք աստծուն, օրը քանի՞ անգամ էիր հայիոյում այն աստծուն, որը դեռևս քեզ կենդանի է թողել, գիտենալով, որ պիտի զոջաս հանցանքներդ, բայց դու դեռևս կրում ես այս զարհուրելի դաշույնը:

Ալի-խանը ինքն էլ չիմացավ, թե ինչպես արձակեց և շարտեց դեպի լուսամուտ իր սուրը, որ ապակին կոտրելով դուրս թռավ և ընկավ խոխոջուն գետի մեջ, սառը քամին կոտրած ապակուց ներս թափանցեց տաք սենյակի մեջ, Ալի-խանը հանեց գլխարկը և յուր քրտնաթոր դեմքը պահեց զով քամու առաջ, որը սկսեց զվարթացնել նորա մթազնած երեսը:

— Շատ լավ, Ալի-խան,— ասաց Սալթանաթ խանումը,— դա նշանակում է, որ դու սկսել ես արդեն զոջալ, ուստի արձակիր ատրճանակդ, և ես ցույց կտամ այն էակին, որն ինձ նոր կյանք և քեզ մարդկային սիրտ պարգևեց:

Ալի-խանը ատրճանակը դրեց սեղանի վերա, իսկ Սալթանաթը դրսի սենյակի դուռը բանալուց հետո վերցրեց նորա ատրճանակը և մտավ իր առանձնասենյակը. Ալի-խանը միայնակ մնաց սենյակում:

Ե

Երբ Սալթանաթ խանումը թողնելով շփոթության մեջ Ալի-խանին մտավ իր առանձնասենյակը, խանը նախ փոքր-ինչ սկսեց կոտրած ապակուց ներս թափանցող թարմ օդը ծծել, թաշկինակով սկսեց սրբել յուր ճակատի վրայից սառը քրտինքը և սկսեց ճեմել սենյակի մեջ. նա դեպի դուռն էր քայլում, երբ առանձնասենյակի դուռը, որ գտնվում էր լուսամուտի եղած պատի անկյունում, մեղմ բացվեցավ և նորա դռան վերա երևաց փոխանակ Սալթանաթ խանումի, մի վեհ հասակով դիմակավոր երիտասարդ. նորա սև դիմակի տակից ո՛չ մորուքի և ո՛չ բեղերի հետքեր էին երևում, նորա հագուստն էր մի պատառոտած արխալուղ, իսկ գլխին կրում էր նույն մորթե գլխարկը, որ նախ սենյակումն էր, և որ Սալթանաթ խանումը աննկատելի կերպով վերցրել էր: Մի երկար սուր հասնում էր մինչև նորա ծնկները, իսկ ոտին կրում էր կոպիտ և սպիտակ կաշիե մի ճանապարհորդական կոշիկ, որ պարսկաստանցիք կոչում են լափիչի: Նա շեմքից ցած իջավ և լռությամբ դեմքը դարձնելով Ալի-խանին, արձանի պես կանգնեց. նորա հետևից առանձնասենյակի դուռը փակվեցավ: Ալի-խանը դառնալու միջոցին հանկարծ տեսավ այս

դիմակավոր երիտասարդին առանձնասենյակի դռան վերա և, մի րոպե շվարած դրության մնալուց հետո ձեռքը գոտին տարավ՝ դաշույնը փնտրելու համար, բայց չգտնելով, համր քայլերով մոտեցավ սև դիմակավորին և մի քայլ արեց դեպի նա:

— Ո՞վ ես դու, հանդուգն երիտասարդ, որ համարձակվել ես ներս սպրդել այս անմարդաբնակ բնակարանը, որտեղի՞ց ներս մտար և ի՞նչ նպատակով,— որոտաց Ալի-խանը:

— Ալի-խան,— խոսեց դիմակավորը մեղմ և դողդոջուն ձայնով,— կամենո՞ւմ ես իմանալ, թե որտեղից եմ ներս սպրդել այս անմարդաբնակ ավազակ որջում — երկնքիցն եմ իջել, ո՞վ գիտե դու կարծել ես, թե «թռչունը իր թևով և օձը իր պորտով» չէր կարող մտնել այստեղ, ողորմելի, ահա սա քսաներորդ անգամը կլինի, որ ես այցելում եմ այս որջը, գտնում եմ այստեղ ապառաժներ — մարդկանց փոխարեն, հազիվ կարողացա իմ արտասուքովս և քաղցր բնավորությամբ կակղացնել մի ամենաապառաժ սիրտ, ես մտել եմ վերջապես այստեղ — մարդաբնակ դարձնելու համար և կամ սորա հետքը ջնջելու...

— Քսաներորդ անգամ և ո՞վ է քեզ այստեղ մուտ գործել թողնողը,— գոչեց Ալի-խանը մի քայլ ևս առաջանալով և աշխատելով թափանցել դիմակը, որից միայն երևում էին երկու աշխույժ և կես զվարթ աչքեր, մի փոքրիկ քնքուշ բերան և մի արծվի քիթ:

— Ո՞վ է ինձ մուտ գործել թողնողը,— դա մի էակ է, որը եթե գործ դնե իր ամբողջ գործությունը, կհալեցնե այս ապառաժե բլուրը, դա մի էակ է, որո մոտ դու և քո ընկերներդ, որոնք ցածումը սպանվեցան, փոշի անգամ չեք, որո մոտ դու հաղթվեցիր և միշտ կհաղթվիս:

— Վերջապես, պիտի հայտնե՞ս թե դու ով ես,— բուռերը բարձրացնելով մոտեցավ նորան Ալի-խանը որոտալով,— դուրս գնա՛ այս րոպեիս այստեղից, ապա թե ոչ՝ մահդ կգտնես. ի՞նչ անելու եկար այստեղ, ի՞նչ գործ ունեիր այդ առանձնասենյակում, որտեղի՞ց ես գալիս, ո՞վ ես, որտեղացի՞ ես, խոսիր, շուտ արա, եթե չես ուզում, որ գլուխդ ջախջախվի, երիտասարդ... և Սալթանաթ խանումի առանձնասենյակում... հիմար գլուխ, ո՞ւր էր թե հավատայի Շիրինի խոսքերին և այժմ այս տեսարանը չտեսնեի,— հարեց նա, նախ իր գլխին խփելով և ապա շանթարձակ աչքերով դիմակավորի հասակն ի վեր նայելով:

— Ես մարդ եմ, Ալի-խան, ես մարդկային սրտի տեր եմ, բայց դու իմ սիրտս կամեցար պատռել, հիմար զքե՛զ, քո արբանյակներդ անգամ, որոնց վերա հույս դրեցիր, դավաճանեցին քեզ, ես այժմ նույն սրտով եկել եմ քո երեսիդ զարնելու քո արյունարբությունդ. հայրասպան, ինչպե՞ս համարձակվեցար սպանել հորդ, որ քեզ ընդդիմանում էր սրբապղծություն գործելուդ համար, ինչպե՞ս համարձակվեցար վավաշոտ սիրուդ համար խողխողել քո հորդ, որո անեծքը դեռևս ճակատիցդ չէ սրբվել, որո արյան հետքերը կրում ես դեռևս ճակատիդ վերա:

Ալի-խանը սարսռաց և ձեռքը մեքենայաբար փռեց յուր կիզիչ ճակատի վերա:

— Վերջապես, ինչպե՞ս համարձակվեցար, խախտելով կրոնի սուրբ օրենքները, հափշտակել եղբորդ կինը, որուն զոհեցիր անպարտ հորդ, և զոհել կարծեցիր եղբորդ և

նրա կնոջը այստեղ բերելով, կամեցար կրքերիդ ծառայեցնել, անգիտակ լինելով, որ կտրած գլուխդ Շահի առաջ հազար թուման գին ունի, նա ևս — այդ կինը ևս կկրեր յուր ընկերոջ և ամուսնո անեծքները — եթե այսքան տարիներ նա չդիմադրեր քեզ և այսօր հաղթահարելով քեզ չզոջար յուր արյունահեղությանց համար. մոտեցիր Ալի-խան, քո եղբոր մոտիցն եմ գալիս, այն եղբորդ մոտից, որ յուր աղաչանքով գուր ձգեց արյունածարավ արբանյակներիդ սրտերում և ազատվեցավ նոցա սրից, նորա կողմից եմ գալիս ես, զոջա և կներվես, զոջա և նույն Ալի-խան Մոստոֆի նիզամը կլինես, թեև քո եղբայրդ վայելում է այժմ այդ պաշտոնդ, բայց ուրախությամբ նա քեզ ետ կդարձնե, եթե միայն զոջաս:

— Ահա քեզ մի երևելի քարոզ, — քա՛հ-քա՛հ ձգելով խոսեց Ալի-խանը, — մի քարոզ, շարունակությունը ավելի հետաքրքրական պետք է լինի, շարունակիր, եղբորս մոտից եկող, որո հետ կերևի մյուս աշխարհումն ես բանակցել, բարեկամ, ո՞ւմն ես ուզում խաբել, փորձառու Ալի-խանի՞ն, իզուր է, այժմ ավելի լավ կլինի, եթե շնորհքնիդ վերցնելով⁴ այստեղից աչքիցս կորսվեք, մյուս անգամ այստեղ մտնելուց նշանը գլուխդ կթողնես, հա՛, հա՛... տեսեք, թե ինչեր է խոսում ինձ, կարծում ես, թե ես կսարսափե՞մ, երբ դու գիտես իմ բոլոր գաղտնիքները, «այն վաղ էր, որ լուսինը պայծառ էր», այն Սալթանաթ խանումն էր, որ կարողացավ մի բռնաբար խղճմտանքս շարժեցնել, և ես ցավ ի սիրտ եմ հիշում գետին գոհ տված այն դաշույնը, որ այս բռնաբար կարող էր և քո արյունովդ էլ թաթախվել, ի վերջո, համեցեք դուրս գնա, ես չեմ կամենում պատերի վերա կախված այդ նվիրական զենքերը թաթախել քո անշնորհք արյան մեջ, այդ զենքերը միայն բավ են քեզ իմաց տալու համար, որ ես Սալթանաթի կարծիքի համեմատ անզեն եմ, իմ և կռուփիս մեկը միայն կար, որ կարող էր դիմանալ և իմ վարպետս լինել, իսկ այդ մեկը այսօր գերեզմանումը խառնվել է իրան շրջապատող հողի հետ և որի մոտից դու իսկ և իսկ գերեզմանից նոր դուրս եկած ինձ մոտ ես եկել քո անճոռնի քարոզներովդ, ես մոլլայի չեմ սիրում, ուրեմն վերցուր շնորհքդ, քանի որ շուտ է և քանի որ կռուփիս գորությունը և ուժը չես զգացել: Խղճմտանքի համար ես խոսում ինձ հետ, բայց այսուհետև թող չլինի ինձ համար այդ բառը, որովհետև այդ անիծյալ բառը կնամարդո է փոխում նաև անհաղթելի առյուծին:

— Խղճմտանքը ինքը քեզ կսովորեցնե իր նշանակությունը, եթե որքան որ դու փակես սրտիդ լսելիքը, խղճմտանքը այնքան կմաշե քեզ, որ դու ամեն մի թեթև քամուց կվախենաս և կսարսափես. ես կգնամ այստեղից, շատ լավ, բայց կտանեմ ինձ հետ նաև այն անձին, որ առանց ինձ չէ կարող ապրել և առանց որո իմ կյանքս չէ և որո հեռանալը միայն կարող է քեզ զոջումի բերել, կռուփ ունիս և այդ կռուփիդ մեկը կարող է պատասխանել, հոգ չէ, երբ միջոցը գա կզգաս նաև իմ կռուփիս ուժը, մի դիմիր բռնության, եթե բանը բռնությունով լինի, քեզ վերա այս բռնաբար փուլ կտրվի քս այս ավազականոցը այն էակի ձեռքով, որ, ինչպես ասացի, միշտ հաղթել է, և հավիտյան կհաղթե...

— Եվ ո՞վ է այն անձը, առանց որո դուրս չես կորչելու այստեղից, — որոտաց Ալի-խանը, հասկանալով դիմակավորի ակնարկած անձի ով լինելը, — ապա՛, խոսի՛ր տեսնենք

⁴ Շնորհքդ վերցուր, թարգմանությունն է պարսկական «թաշրիֆ բըբարիդ» բառերի, իսկ «թաշրիֆ բըբարիդ» նշանակում է շնորհք բերեք — համեցեք:

կարո՞ղ ես արդյոք ողջ ատամներովդ դուրս գալ այստեղից, նորա անունը արտասանելուց հետո և քո դուրս գնալուց հետո, մի՞թե նա հույս կունենա ազատ մնալու իմ ահարկու պատժից, ապա ուրեմն, ո՞վ է այդ անձը...

— Ուրեմն կռիվ ես կամենում, շատ լավ, իմ ուզածս էլ այդ է, որ քեզ ոտիս տակ առնելով, կոտրեմ վերջապես քո եսասիրությունդ, այդ անձը Սալթանաթ խանումն է...

Ալի-խանը սկսեց բարկությունից դողալ, և այլևս չկարողանալով զսպել իրեն, առյուծի նման ցատկեց սև դիմակավորի վրա և յուր հուժկու կռուփը մոտ էր տապալելու այդ նիհար և երևույթով թույլ երիտասարդին, երբ մի ուժգին կռուփ կոտրեց նորա քիթը, արյունը սկսեց առատությամբ վազել և Ալի-խանը թե սարսափից և թե ցավից թավալգոր գետինը փովեցավ գոչելով.

— Ա՛հ... այս նորա կռուփն էր...

Կռուփ տվողը ոչ այլ ոք էր, եթե ոչ երիտասարդի ձախ ձեռքը. երբ Ալի-խանը հարձակվեցավ նորա վերա, նա անդդովելի մնաց յուր տեղում, բայց երբ մոտ էր, որ ահա նորան տապալեր Ալի-խանի կռուփը, նա ձախ ձեռքով վարից—վեր նորա դեմքին մի մեղմ հարված տվեց, որը, սակայն, տապալեց խանին, իսկ այս վերջինը, առաջին անգամ իսկ ճանաչելով կռուփը, ավելի սարսափից վայր ընկավ, քան թե ցավից, որովհետև նա զգաց իրան ծանոթ կռուփները, որոնցից կերևի շատ էր կերել: Ալի-խանը երեսի վերա գետին փոված սաստիկ ամոթից չէր համարձակվում բարձրանալ, բայց թե այսպես և թե այնպես նա ուշքի եկած և ավելի կատաղած, վեր թռավ տեղից և հարձակվելով պատից կախված մի սրի վրա, կորզեց պատից, հանեց կեռ սուրը պատենից և մի սարսափելի հարված տվեց երիտասարդին, որ անշուշտ կսպաներ նորան, եթե յուր սրով ի դերև չհաներ նորա հարվածը: Դամասկյան սրերի միմյանց բախումից կայծեր էին ցայտում, Ալի-խանը ավելի կատաղի կերպով սկսեց հարված տալ անդդովելի և լուրջ երիտասարդին, բայց սա ամեն կերպով նորա սուրը իրանից հեռու դրության մեջ պահելով, չէր աշխատում Ալի-խանին հարվածել, թեև այդ շատ հեշտ էր, որովհետև խանը կատաղության և ամոթապարտության վերջին աստիճանին հասած լինելով, առանց չափելու և կշռելու էր կռվում:

Այստեղ սկսվեցավ մի կատարյալ եվրոպական մենամարտություն: Լավում էին միմիայն երկու համանման դամասկյան կեռ սրերի շկահյունը:

Անծանոթ դիմակավորը կռվում էր լրջորեն, առանց շարժվելու իր տեղից, իսկ Ալի-խանը կատաղի ուսույուններ գործելով՝ աշխատում էր հարվածել երիտասարդին, որով կարողանար ազատվել ամոթապարտությունից: Վերջապես երիտասարդի համբերությունը հատավ. նա մի քայլ առաջ գնաց և սրի բուրձ կողքով այնպես մի շեշտակի հարված տվեց Ալի-խանի թևին և նորա ձեռքից թոցրեց սուրը:— Ալի-խանը ուսի ցավից և կատաղությունից կրկին ընկավ գետին, այս անգամ դիմակավորը ժամանակ չտալով նորան ուշքի գալու, հեռու ձգեց յուր երկար սուրը և ոտքը դնելով Ալի-խանի կրծքին, հանեց գոտիից մի փոքրիկ դաշույն և մոտեցնելով նորա կոկորդին, ասաց մեղմ և ցավագին ձայնով:

— Ալի, բավական է, կարծեմ որ զգացիր թևիս ուժը, խոստովանվիր, որ հաղթվեցիր, և քեզ մի քանի պայմաններով ազատ կթողում, քո կյանքն այժմ իմ ձեռքս է, բայց ես չեմ սիրում քեզ նման մարդկային արյունով լվալ այս դաշույնը, որ ժառանգություն է և որը քո գետը ձգած դաշույնի ընկերն էր...

— Ե՞ս հանձնառու լինեմ թողնել Սալթանաթին իմ աչքի առաջ կորզելու ձեռքիցս,— գոչեց կատաղի և կերկերուն ձայնով Ալի-խանը,— կտրիր կոկորդս, և կամ թող որ ես խմեմ քո արյունը, ես չեմ ընդունում և ոչ մի պայմանդ, և եթե ազատվեցի քո ոտի տակից և քո ձեռքիցդ, այն ժամանակ զգուշացիր կյանքիցդ, որ այնուհետև մի մազից կախված կլինի...

— Լռի՛ր... գազան,— որոտաց երիտասարդը այնպես մի ձայնով, որ թնդաց ամբողջ սրահը և սարսափեցրեց Ալի-խանին և նույնիսկ առանձնարանից լսող Սալթանաթ խանումին,— անա՛րգ հրեշ, այդ որքա՛ն լերդացել է քո սրտիդ արյունը, այդ որքա՛ն ապառաժ սիրտ ես կրում քո մեջ, դու քարի՞ց ես ծնվել թե՞ մարդից, չասեմ հրեշից, հրեշն անգամ կհաղթահարվի սրտով այսպես դեպքերում, իսկ քո սիրտդ, քո սիրտդ արժան է շանց կերակուր ձգվելու, վերջապես կամենում ես, որ իմ դաշույնս քո պիղծ արյան մեջ թաթախե՞մ, բայց այդ բանը կամենալուցդ առաջ, մտածիր, հիմարդ,— թե ավելի լավ չե՞ ներողություն խնդրել և ապրել։ Սալթանաթին տանողը իրավամբ է տանում, որովհետև նա նորանն է և նորան է պատկանում, ես չեմ Սալթանաթին տանողը և կամ կամեցողը — դա քո եղբայրն է, այն եղբայրդ, որին դու մեռած ես կարծում, իսկ նա այժմ այս բոլորին տեսնում է քեզ կից սենյակից, սպասում է քո գոջալուդ...

— Սո՛ւտ է, սարսափելի կերպով ստում ես,— ասաց Ալի-խանը և հագիվ չիսեղծվելով սև դիմակավորի ոտքի ճնշումից,— եթե ուղիղ է, թող գա, և ես անձնատուր լինելով, նորան կհանձնեմ Սալթանաթին։

— Ուղի՞ղ է այդ խոստումդ, երդվում ե՞ս այս բոլորին,— առանձնասենյակից դուրս գալով ասաց Սալթանաթ խանումը,— ուրեմն...

— Խանում, Սալթանաթ,— միջահատեց նորան Ալին որոտագին ձայնով,— դու ևս մասնակի՞ց ես սորան, ուրեմն դեռևս համարձակվում ես առաջս դուրս գալ և հրճվել հաղթությանդ վերա, գնա՛, կորի՛ր, հեռացի՛ր աչքիցս և վախեցիր իմ վրեժխնդրությունից, իսկ դո՛ւ, սև դիմակավո՛ր, մորթիր ինձ, ես իմացա, որ ներս ես սպրդել այստեղ հափշտակելու ինձնից ոճրագործությամբս տիրացած սիրուհույս, բայց թե կազատվեմ, ապա կտեսնեք վրեժխնդրությունս։

— Է՛հ... ողորմելի՛ դ,— խոսեց հեգնորեն դիմակավորը, ոտը քաշելով և ազատ թողնելով Ալի-խանին,— վեր կա՛ց և հեռացիր այստեղից, երկրորդ անգամ այստեղ ոտ կոխելուդ հետևանքդ կտեսնես, ես այլևս չեմ վախենում քո թույնից, նորան փչացրի ես, գնա և ինչ որ կարող ես ի գործ դիր, բայց ես լավ գիտեմ, որ ոչինչ չես կարող անել, գնա՛ և զգուշացիր, արդեն զգացի՛ր ուժս, թույնդ թափված է, թունավոր ակռաղ խլել եմ...

— Նորա տեղը նորը կաճե և ավելի սարսափելի թույնով,— ասաց Ալի-խանը վերկենալով և դեպի դուռն ուղղվելով, նա ձախ ձեռքը դրեց դռան կոճակի վերա, իսկ աջ ձեռքը պարզելով դեպի երկու սենյակում մնացողներին ասաց.

— Զգուշացե՛ք, վրեժխնդրությունս սարսափելի կլինի, երիտասարդ, դու որ զինաթափ արիր ինձ այս միջոցին, մի ժամից հետո ես նույն Ալի-խանն եմ, Սալթանաթ, խաբեցիր ինձ, սպասիր և կտեսնես,— հարեց նա և դուռը բաց անելով անհետացավ, մինչդեռ դիմակավորն ասում էր նորա հետևից.

— Ողորմելի՛, մինչև թունավոր ակոսայիդ աճելը, ես արմատը ևս կխլեմ:

— Ցավալի բան, Շիր-Ալի, դեռևս նույնն է այդ գազանը,— ասաց Սալթանաթը Ալի-խանի դուրս գնալուց հետո:

— Դա ինձ ավելի ցավ է պատճառում, բայց ի՞նչ պետք է անել, ամբողջ տասը տարի է, որ նորա խղճմտանքի ձայնը դադարել է տանջելուց, չպետք է հուսալ, որ նա կփոխվի, բայց ժամանակը և նորա քեզնից զրկվելու ցավը նորան կփոխե...— ասաց դիմակավորը, որի Ալի-խանի եղբայրը լինելը և նորա ինչպես ազատվելը վիպասանությունս արդեն ցույց տվավ և հանելով յուր դեմքից սև դիմակը ցույց տվավ յուր կես զվարթ և կես վշտագին գեղեցիկ դեմքը:

— Երդվում եմ Իմամ Միրզայի անունով, որ նորան յուր առաջվա պաշտոնը ետ կտամ, եթե սրտանց զղջա,— ասաց նա սրտաշարժ ձայնով:

— Որքա՞ն բարի սիրտ ունիս, սիրելի խանս,— ասաց Սալթանաթը և ընկավ նորա գիրկը: Տասը տարիներից հետո առաջին անգամն էր, որ նա լսեց իր սենյակում «Իմամ-Միրզայի» անունը, ուստի լցվեցավ ջերմեռանդական զգացմունքով և երեսը ծածկելով ամուսնո կրծքի վերա սկսեց արտասվագին աղոթել...

Զ

Վերոհիշյալ դեպքերից անցել էր մի շաբաթ, և՛ Շիր-Ալի խանը և՛ Սալթանաթը վայելում էին ամուսնական քաղցր երջանկությունը: Իսկ թե ո՞ր էր Ալի-խանը, ի՞նչ էր դարձել նա — մենք այդ կտեսնենք:

Օգոստոսի 26-ն էր: Արեգակը արդեն մայր էր մտել:

Սալթանաթ խանումը սպասում էր իր ամուսնո շահսավանների⁵ գյուղերից վերադառնալուն, ուր նա գնացել էր զանազան իրեղեններ գնելու, կարավաններն այժմ

⁵ Շահսավանները Պարսկաստանի վրանաբնակ և վայրենի ցեղերից մեկն են, այդ ցեղերը երբեք չեն հաստատվում մի տեղ, այլ եղանակի և տեղի հարմարության համեմատ փոփոխվում են, զոցա նման են և զարկյարները, դարասորանները, շահրիարները և այլն, և այլն:

հանգստությամբ անցնում էին այդ երկյուղալի ճանապարհից զարմանալով «Շեյթան Կրզկալեսու» ավազակապետուհու չերնալու վերա: Ջորիների վզից կախված զանգակները դողանջելով արձագանք էին տալիս լեռներում:

Այդ միջոցին Կզլոդան գետի մյուս ափում շրջագայում էր մի սև և երկար վերարկուի մեջ փաթաթված անձն, ուղղակի «Կրզկալեսու» հանդեպը, նա հաճախ աչքերը բարձրացնում էր դեպի փոքրիկ լուսամուտը. կարծես մեկին տեսնելու սպասելով, բայց պատուհանը փակված էր, և ոչ ոք չէր երևում, շրջագայողը ինքը ևս գիտեր, որ ոչ ոք չէր երևնալու այնտեղ, բայց կարծես բնագդմամբ աչքը սևեռած պատուհանի վերա, մի ամենաթեթև շշուկից անգամ տարուբերվում էր ափերի քառաժայռերի վերա. այդ ժայռերը կտոր-կտոր դուրս էին պարզվում գետը և սաստիկ լայրծուն էին թաց լինելով գետից դուրս ցայտող փրփրագեղ ջրով, բայց վերարկուով անձը, ուշադրություն չդարձնելով դորան, կանգնում էր երբեմն նորանցից մեկի վերա և դիտում էր հեռուները, սպասելով կարծես մի ուրիշ անձի:

Վերջապես, նա ուրախությամբ ցած թռավ ժայռից և դեպի հառաջ քայլեց, այդ միջոցին լսվում էր այդ խորին լռության մեջ, որովհետև հեռացել էին կարավանները, մի ձիու մեղմ ոտնաձայն, որը հետզհետե սաստկանում էր և նմանվում էր մի արշավող ձիու ոտների դոփյունին: Վերարկուով անձը իսկույն ցած նստավ և, սլքվելով մի քարի հետև սպասեց: Անցավ կես ժամ, և ահա ձորից բարձրացավ մի զինավորված հուժկու ձիավոր, որ կրում էր մի սև դիմակ և որը արշավակի հառաջ էր գալիս դեպի սլքվածը, բայց և աչքերը սևեռած էր նույնպես Կրզկալեսու պատուհանիկի վերա:

Երբ բավականին հառաջ գալով անգիտակցաբար կանգնեցրեց ձիուն այն քարի մոտ, որո հետևը սլքվել էր վերարկուով անձը, հանեց գոտուց մի ատրճանակ և պարպեց օդի մեջ, կրկին աչքերը բևեռելով պատուհանի վերա, որ իսկույն բացվեցավ և նորա առաջ դրսույնը երևեցավ մի կնոջ հագուստով անձն, որ հառաջանալով դեպի բլուրի ծայրը տատանեց յուր ձեռքի սպիտակ թաշկինակը. ձիավորը ստացավ զվարթ դեմք և մտրակը բարձրացրեց ձիուն առաջ քշելու համար, բայց այդ ընթացքին քարի հետևից փողփողեց մի ատրճանակի խողովակ, թնդաց ատրճանակը, և ձին մի սարսափելի խրխնջոց արձակելով ընկավ գետին, ձիավորը շփոթված ուզեց ազատվել ձիու տակից, բայց ոտը թամբի տակ մնացած լինելով, նորան սաստիկ ցավ տալուց բացի, անկարելի էր առանց մեկի օգնության ազատվել:

Անկարելի էր նկարագրել բլրից նայող կնամարդու շփոթված շարժումները և վայնասունքը: Այդ միջոցին քարի հետևից դուրս երևեցավ վերարկուով անձը և հարձակվելով ձիու տակը մնացող ձիավորի վերա, սուրը նորա կոկորդին դնելով գոչեց.

— Անձնատո՛ւր եղիր, սև դիմակավո՛ր, այժմս իմ ձեռքս ես, բայց մի գունատվիր այդպես շուտով, դեռևս չեմ զրկելու քեզ քո կյանքից, դեռևս պիտի լսես իմ քարոզները, որոնցից դու բավականին կարդացիր իմ գլխին, ես քեզ բռնեցի, կյանքդ իմ ձեռքս է, ահա այս քու սուրիդ, այս քո ատրճանակիդ և այս քո դատարկ հրացանիդ վիճակները,— հարեց նա

հետգհետե այդ զենքերը հանելով ձիավորի վրայից և շարտելով հեռու. ձիավորը զինաթափ լինելով ամեն ճիգ թափում էր ազատվելու նորա ձեռքից, բայց վերարկուով անձը քակելով իր մեջքից մի չվան, կապեց նորանով ձիավորի ձեռքերը և ապա ձիու տակից նորան ազատելով տարավ ուղղակի գետափը՝ Կըզկալեսուի պատուհանի հանդեպ, որտեղ կանգնած կինը, որո Սալթանաթ խանումը լինելը, անշուշտ, ընթերցողը իմացավ, անձկանոք սպասում էր գործի ելքին:

«Եթե ես օգնության շարժում անեմ, նա իսկույն կսպանե նորան և կփախչե նույնիսկ, եթե տեղիցս անգամ շարժվեմ», — մտածեց նա և սպասում էր:

Վերարկուով անձը, որ Ալիխանն էր, ձիավորին (որ Շիր-Ալի-խանն էր) գետին նստեցնելուց հետո, ձեռների կապված չվանը փաթաթեց մի ծանր և անշարժ քարի, իսկ ինքը հանելով իր գոտուց մի ատրճանակ սկսեց խոսել:

— Տեսա՞ր այժմ, ազնիվ բարեկամ, մենք դարձյալ հանդիպեցինք միմյանց և ավելի լավ կերպով, սկսիր՝ նայեմ քո քարոզներդ, փորձիր տեսնենք կռուիներդ կրկին իրանց ուժն ունե՞ն:

— Ալի-խան, — խոսեց Շիր-Ալին, — իզուր խոսակցություններ հարկավոր չեն, դավաճանությամբ կարողացար հաղթել ինձ, եթե կամք ունիս ազատելու և կամ սպանելու, շուտ արա վերջ տուր:

— Ո՛չ, դու ևս ուշացնում էիր ինձ ազատել կամ սպանել, երբ ես էլ մի շաբաթ առաջ քո ոտների տակը փռված սպասում էի կամ մահվան կամ ազատման, և այդ միջոցին ես հետգհետե երեք ուխտ արեցի, ինչպես որ «հազար և մեկ գիշերների» միջի Սողոմոնից փակված դևը արեց: Եթե, մտածեցի ես, առաջին անգամ խոսելուց հետո ինձ ազատեիր որքան որ քեզ նախատեի, ուխտել էի քո մտերիմ բարեկամը լինել և քեզ թողնել Սալթանաթին, երկրորդ անգամ մտածեցի, եթե երկրորդ խոսակցությունից հետո ինձ ազատեիր, վերոհիշյալ բոլոր ուխտերիս վերա ավելացրի և իմ դարվիշ լինելը — բայց դու երրորդ անգամ ևս սկսեցիր խոսել, ուստի ես կատաղաբար ուխտեցի, որ եթե ազատվեի քեզնից, առաջին իսկ հարմար դեպքում, քո արյունդ պիտի խմեի — ազատեցիր, շնորհակալ եմ, բայց ուխտս պիտի կատարվի, ուստի աղոթիր քո աստծուդ և պատրաստվիր մեռնելու նույնիսկ քո ինձնից հափշտակած սիրուհուդ ներկայությամբ, որ վերևից ահա դիտում է մեզ: Սալթանաթ խանում, — հարեց նա դառնալով դեպի Սալթանաթը — թեև դու չկամեցար իմս լինել, բայց երբ սա կմեռնի, էն ժամանակ կամա-ակամա իմս կլինես, իմացիր որ այս բոպեիս սորան ազատ կթողնեմ, եթե խոստանաս իմս լինել, սորա արյուն թափելը քո պատճառով է. ասա ինձ, ո՞վ է արյունահեղը, նա որ գործում է, թե նա, որ դրդում է... — նա լռեց:

Սալթանաթ խանումը թեև հասկացավ, որ իրան հետ է խոսում Ալի-խանը, որո վերարկուն ցած էր ընկել և որին նա ճանաչեց արդեն, բայց և նորա ոչ մի խոսքը չլսեց թե՛ հեռավորության պատճառով, և թե՛ քամին վերից դեպի ցած փչելուն պատճառով, ուստի բացի սպառնագին շարժումներից ոչինչ չկարողացավ անել:

— Սպառնա՛, գեղեցիկ մարդասպանուհի, երբ քո այս երրորդ սիրահարդ այլևս չլինի, շուտով կստիպվիս ոտս ընկնել և աղաչել:

Շիր-Ալի-խանը, որի դիմակը Ալի-խանը մոռացել էր հանելու մտածեց իրան ցույց տալով՝ սարսափեցնել նորան, բայց սա ավելի ևս չկամենալով երկարացնել այս տեսարանը, հանեց գոտուց մի ատրճանակ և, ուղղելով դեպի Շիր-Ալի-խանը, որոտաց ահարկու ձայնով.

— Ասա՛ ասելիքդ, որովհետև մի բոպե հազիվ ունիս ապրելու և այդ բոպետումը հայտնիր ինձ, թե դու ո՞վ ես, ի՞նչ կերպով կարողացար գրավել մի փոքրիկ ժամանակամիջոցում այն ապառաժ սիրտը, որ ես տասը տարի է չեմ կարողացել գրավել:

— Որովհետև,— խոսեց տխուր ձայնով Շիր Ալի-խանը,— քո տասը տարիներով սիրույդ առհավատչյան և ապացույցը արյուն էր և այժմ իսկ արյուն է, իսկ իմը—մարդկային ջերմ և մաքուր սիրտ. լսիր, Ալի-խան, ես գիտեմ, որ ինձ սպանելու ես, բայց այս վերջին խրատներս լավ ի միտ առ, որև դրանով կարող դարձնել քո առաջին փառքդ և գուցե իսկ կարող ես սիրվել Սալթանաթից, ինձ սպանելուց հետո խոստացիր մի կաթիլ արցունք անգամ չթափել վրաս և քո արյունահեղությանդ վերջ տուր իմ արյունով: Խոստացիր վերցնել Սալթանաթին այդ դիվաբնակ վայրերից և գնալ ապրել մի որևիցե մարդաբնակ տեղում, փոշիացնելով այդ զարհուրելի բնակարանը, խոստացիր ինձ, որ իմ մեռնելուց հետո մի կամուրջով այս գետի վերա դյուրացնես ճանապարհորդությունները և ինքդ նոր կնոջդ հետ, որին տալիս եմ քեզ, հեռանաս այստեղից: Վերջապես խոստացիր մոռանալ ամեն անցյալը, զոջալ քո ոճրագործություններիդ համար և լինել բարի այս Սալթանաթի համար, մխիթարիր նորան քո զոջումով և զանազան բարեգործություններով, այլև փոքրիկ ինձ համար գերեզման քո բնակելու տեղիդ մոտ և երբեմն հիշիր ինձ: Գիտեմ զոջալու ես ինձ սպանելուդ համար, բայց արդեն ուշ կլինի և դու քո զոջումովդ ամենաբարին աստված դիմիր, գուցե նա զթա քեզ վերա...

— Էլի քարոզ, էլի քարոզ, և այս անգամ այնպիսի քարոզ, որ կարող էր կնամարդի մարդու սիրտը շարժեցնել, բայց դու, որ Սալթանաթ խանումին քո սեփականությունդ համարված ինձ ես տալիս նորան քո մահից հետո, ավելի լավ չէ՞, որ կենդանության ժամանակ հանձնես ինձ նորան և դու հավիտյան հեռանաս այստեղից, որովհետև քո մահից հետո դժվար չէ նորան ինձ սեփականացնել:

— Միսալ ես, բռնությունը կստիպե նորան քեզ հնազանդվիլ, բայց սեր երբեք չէ կարող լինել, եթե դու քո այդ այժմյան ընթացքդ շարունակես, լավ իմացիր, որ գուցե մի օր վերջապես իմ հիշատակովս և իմ դահիճս դառնալու համար տանջվիս և անձնասպանության դիմես, լավ, այսքանն էլ բավ է, եթե չունիս այս բլուրից ավելի կարծր սիրտ, իմ՝ քո ձեռքովդ մաս քեզ զոջումի կրբերե, վերջացուր, կատարիր դահճական գործդ...

Ալի-խանը կարծես բնագդումով չէր իշխում ատրճանակը արձակել, Շիր-Ալի-խանի խոսքերը և նորա իրան դահիճ անվանելը, նորան վարանեցնում էր. նորա մտքից մի բոպե անցավ ազատ թողնել նորան և խոստում առնել հեռանալ այս վայրերից, բայց հետո նույն Ալի-խանը եղավ, երբ մտաբերեց, որ Շիր-Ալի-խանի ազատվիլը կարող էր իրան մահ

պատճառել, նա կարծեց թե ամեն ոք յուր նման ապառաժ և ռիսկալ սիրտ է կրում, ուստի և կարծեց, որ նա ազատվեց թե չէ, պիտի խաբէ իրան և մի օր բռնելով իրան պիտի հաղթե, մանավանդ, երբ հիշեց, որ նա իրանից կրկնապատիկ ավելի ուժ ունի: Այս հիման վերա, նա քաշեց ատրճանակի շնիկը, դրեց բլթակի վերա մի պիստոն, զինեց, և երեսը դարձնելով դեպի բլուրը չտեսնելու համար Շիր-Ալու մահը, որն արդեն շարժել էր նորա սիրտը, ուղղեց ատրճանակը նորա կրծքին և ասաց.

— Աղոթի՛ր, եթե կամենում ես մի բոպե ևս, ապա պիտի մեռնի՛ս:

Շիր Ալի-խանը տեսավ արդեն, որ պիտի մեռնի, ծնկի վերա եկավ և, աչքերը մի վայրկյան ուղղելով դեպի երկինք, աղոթեց առ աստված, հետո աչքերը դարձրեց բլուրի վրայի սաստիկ հուզմունք և շփոթմունք ցույց տվող Սալթանաթին և աչքերը երկինք բարձրացնելով կամեցավ ասել:

— Այնտեղ կտեսնվինք...

Սալթանաթ խանումը, որ սաստիկ հուզված սրտատրոփ դիտում էր նոցա ամեն մի շարժվածքը, այս ականարկը ստանալով, իմացավ, որ յուր ամուսինը սպանվելու է յուր եղբոր ձեռքով, ուստի մտածեց բաց անել գաղտնիքը, նա ձեռքով հուսահատությամբ ականարկեց Ալի-խանին Շիր-Ալու դիմակը բարձրացնել և անդադար գոչում էր,

...Սպասիր, հրեշ դու, դա քո եղբայրն է... դա Շիր-Ալին է... թե՛ տեղի հեռավորությունից և թե՛ գետի ձայնից անլսելի եղան այս խոսքերը, խանումի շարժվածքները, որովհետև մութն արդեն սկսել էր կոխել. Ալի-խանը մասամբ չհասկանալով և մասամբ չտեսնելով բարձրացրեց ատրճանակը, և ահա մոտ էր, որ Շիր-Ալի-խանը գնդակահար ցած ընկներ. երբ Սալթանաթ խանումը, որի մազերը բաց սփռվում էին նորա ուսերի վերա, մոռանալով յուր վտանգավոր տեղում կանգնելը, բազկատարած մի քայլ հառաջ անցավ, կարծես կամենալով յուր ամուսնուն օգնություն հասնել, բայց ոտքը սայթաքեց ապառաժի վերայից և նա...

— Եղբայրդ է, վա՛յ քեզ,— գոչելով թավալզոր ցած գահավիժեցավ ժայռերից դեպի գետը, նորա վերջին «վայ»-ի արձագանքը հնչելով մարեց շրջագա լեռներում:

Ալի-խանը սարսափած վայր ձգեց ատրճանակը, որը բլթակը կպչելով մի քարի կրակվեցավ և ծուխով պատեց Շիր-Ալի-խանին, հառաջ վազեց դեպի գետափը, որոտաձայն գոչելով.

— Մի՛... խանում... ազատ եմ թողնում նորան...

Բայց արդեն Սալթանաթ խանումի դիակը թավալելով և կտոր-կտոր լինելով ժայռերի խութերի վերա ընկավ գահավիժմամբ գետի մեջ և հորձանքը նորա դիակը յուր տակը ծածկելով սրընթաց կերպով հառաջ քշեց աներևութացնելով նորան...

Ալի-խանը կանգնած մի լպրծուն ապառաժի վերա, սարսափահար և շփոթված քարացել էր, բայց երբ տեսավ դիակի գետն ընկնելը, կորցրեց իրան և առաջ անցած իբր թե կամեցավ չթողնել դիակի գետի տանելուն, բայց կարծես նախախնամությունը ուրիշ կերպ էր

տնօրինել, նորա ոտքը ևս սայթաքեց լարծուն և թաց ժայռի վրայից, և նա, չկարողանալով հավասարակշռություն պաշտպանել, ընկավ գետը. մի րոպե նա երկու ձեռքերով ժայռից բռնած կամեցավ ազատվիլ, գլուխը ջրից բարձր բռնելով, բայց այդ րոպեին Շիր-Ալիի բաց երեսը տեսնելով յուր մոտ, սարսռաց և ձեռքը թուլանալով ընկավ գետի մեջ, գոչելով.

— Եղբայր ի՛մ, Շիր-Ալի՛...

Նորա ձայնը արձագանք տվավ լեռների մեջ, բայց մի ակիք գալով, ծածկեց նորան և քշելով տարավ հակառակ Շիր-Ալի-խանի ճիգերին, որ սաստիկ հուսահատ դրության մեջ էր յուր եղբոր արժանի մահը և յուր սիրուհու անձնասպանությունը տեսնելով:

Այս միջոցին մութը կոխած լինելով, մի սև ամպ գալով երկնքի երկնակամարի վերա, ծածկեց այդ ողբալի տեսարանը:

Շիր-Ալի-խանը շանթահար ծառի նման երեսի վերա ընկավ, և ամեն ինչ թաքնվեց խոր մթնության մեջ...
